

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Տնաեւսազիստորյան դոկտոր,

ՀՊՏՀ ֆինանսական հաշվառման
ամբիոնի ղոցենա, «ԱԳԲԱ Լիգինգ»
ՎԿ ՓԲԸ զիսավոր հաշվապահ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԲԱՆԿԵՐՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Լիզինգը կամ ֆինանսական վարձակալությունը ՀՀ-ում իրականացվում է առևտրային բանկերի, ինչպես նաև վարկային կազմակերպությունների ֆինանսական գործառույթներով՝ լիցենզիայի հիման վրա: ՀՀ-ում ֆինանսական վարձակալությամբ զրադարձ կազմակերպությունների դիրքերը ֆինանսական շուկայում ներկայացված են առյուսակում:

Աղյուսակ 1

Լիզինգային վարկային կազմակերպությունների ներդրումների շարժմանը՝¹

Անվանություն	Անունը գործառնության վեցական գծում՝ 31.12.2011 (մլն. դր.)	Բանմիջնական շուկայի մասնակիությունը՝ 31.12.2011 (%)	Անունը գործառնության վեցական գծում՝ 31.12.2010 (մլն. դր.)	Բանմիջնական շուկայի մասնակիությունը՝ 31.12.2010 (%)	Անունը գործառնության վեցական գծում՝ 31.12.2009 (մլն. դր.)	Բանմիջնական շուկայի մասնակիությունը՝ 31.12.2009 (%)	Անունը գործառնության վեցական գծում՝ 31.12.2008 (մլն. դր.)	Բանմիջնական շուկայի մասնակիությունը՝ 31.12.2008 (%)	Բանմիջնական շուկայի մասնակիությունը՝ 31.12.2007 (%)
ԱԳԲԱ - Լիզինգ	6 109 599	94.81	4 616 441	93.72	5 032 268	93.62	4 534 564	96.37	
ԱԳԲԱ- Լիզինգ	260 759	4.05	192 053	3.90	279 924	5.21	170 629	3.63	
ՅՈՒՆԻ- Լիզինգ	73 546	1.14	117 482	2.38	62 832	1.17	0	0	
ԸՆԴԱ- ՍԵՆԸ	6 443 904	100	4 925 976	100	5 375 24	100	4 705 193	100	

Ծովայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, Հայաստանի Հանրապետության կազմակերպություններում ակտիվացավ վարձակալությունը և, հետևաբար, անհրաժեշտություն առաջացավ կանոնակար-

¹ Կազմված է ըստ Ռейтинг կредитных организаций Армении: 31.12.2009-N23, 31.12.2010-N27, 31.12.2011- N31, Ինформационное агентство АрмИнфо ավլաների:

գելու այդ գործունեության ու դրա արդյունքների հաշվապահական հաշվառման և հաշվետվորթյան գործընթացն ինչպես վարձակալի, այնպես էլ վարձատուի պարագայում: Այս առումով արդիական է հաշվապահական հաշվառման 17.«Լարձակալություն» միջազգային ստանդարտի կիրառումը, որի նպատակն է ներկայացնել վարձակալների և վարձատուների համար հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականություն, ինչպես նաև վարձակալությունների նկատմամբ կիրառվող բացահայտումներ²:

Ֆինանսական վարձակալության կարգավորման՝ ՀՀ տնտեսահրավական դաշտում ներկայում գործող փաստարդություն են. ՀՀ քաղաքացիական օրենսգիրը (1998 թվականի մայիսի 5), «Շարժական գույքի կադաստրի վարման, շարժական գույքի գրավի իրավունքի, լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցման մասին» ՀՀ օրենքը (2004 թ. մայիսի 11), «Հարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը (2002 թ. մայիսի 29), ԱՊՀ-ում լիզինգային գործունեության ընդլայնման համար բարենպաստ իրավական, տնտեսական և կազմակերպական պայմանների ստեղծման համաձայնագրին ՀՀ միանալու մասին որոշումը (2006 թ. հունիսի 16):

Թե՛ իրավական և թե՛ հաշվապահական հաշվառման կազմակերպման առումով տարրերում են գործառնական ու ֆինանսական վարձակալություն:

Համաձայն ՀՀ ԶՈ հոդված 677³-ի՝ վարձատուն լիզինգի պայմանագրով պարտավորվում է վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վերջինիս կողմից որոշված վաճառողից և վճարի դիմաց հաճած նել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը՝ ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու համար: Այդ դեպքում վարձատուն պատասխանատվություն չի կրում վարձակալության առարկայի և վաճառողի ընտրության համար:


Հաշվապահական հաշվառման 17.«Լարձակալություն» միջազգային ստանդարտով ֆինանսական և գործառնական վարձակալության տարարաժամանումը կատարվում է մի շարք չափանիշներով (զծապատկեր 1): Համաձայն նշված ստանդարտի՝ վարձակալությունը դիտարկվում է որպես ֆինանսական, եթե, ըստ էության, վարձակալին են դիտանացվում սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները: Վարձակալությունը գործառնական է համարվում, եթե դրանք չեն դիտանացվում: Ռիսկերը ներառում են վարձակալած հզորությունների պարապուրդը կամ տեխնոլոգիաների հիմ լինելու պատճառով առաջացող հնարավոր վճարները և տնտեսական պայմանների փոփոխման հետևանքով հատույցի փոփոխությունները: Հատույցները կամ օգուտները կարող են ներկայացվել որպես ակտիվի տնտեսական ծառայության ընթացքում շահութաքեր շահագործումից և արժեքի բարձրացումից կամ մնացորդային արժեքի իրացումից ավելի շատ եկամտի ստացման ակնկալիք:

Սովորաբար վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության

² Տե՛ս ՀՀՍՍ 17. «Լարձակալություն»:

³ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրը (ընդունված է ԱԺ-ի կողմից 1998 մայիսի 5-ին):

Ժամկետի ավարտին փոխանցվում է վարձակալին, վարձակալը հնարավորթյուն է ունենում տվյալ ակտիվը գնելու ենթադրվող զնով, որը բավականաչափ ցածր կլինի այդ հնարավորթյունն օգտագործելու պահի ամսաքի իրական արժեքից, և եթե վարձակալության սկզբունք արդեն կա խելամբան համոզվածություն, որ այդ հնարավորթյունը կօգտագործվի: Վարձակալության ժամկետում ներառվում է ակտիվի տնտեսական ծառայության մեծ մասը, եթե նոյնիսկ սեփականության իրավունքը չի փոխանցվում: Վարձակալության սկզբունք նվազագույն վարձավճարների ներկա արժեքը վարձակալված ակտիվի առնվազն իրական արժեքն է: Վարձակալված ակտիվների յուրահատուկ բնույթի պատճառով միայն վարձակալն է ի վիճակի դրանք օգտագործել առանց էական ձևափոխությունների⁴:



Գծապատկեր 1. Գործառնական և ֆինանսական վարձակալության տարրերակման չափանիշները⁵

⁴ Տե՛ս Epstein B., Jermakowich E., Interpretation and Application of International Financial Reporting Standards, Wiley inc., USA, 2010, էջ 1344:

⁵ Ա. Հակոբյան, Ֆինանսական վարձակալություն, Եր., Հեղ. իրատ., 2011, 256 էջ:

Ֆինանսական վարձակալության ժամանակ գոյություն ունեն առանձ-նահատկություններ՝ կապված վարձակալի և վարձատուի հաշվառման ու հաշվետվության մեջ վարձակալության գործառնությունների ճանաչման, չափման ու արտացոլման հետ: Լիզինգային գործառնությունները վարձա-կալի և վարձատուի ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու նո-տեցումները սահմանված են նույն՝ 17.«Վարձակալություն» ստանդարտով:

Վարձատուն ֆինանսական վարձակալության տրված ակտիվներն իր ֆինանսական վիճակի նախն հաշվետվությունում պետք է ճանաչի որպես ակտիվ և ներկայացնի դրանք որպես դերիտորիական պարտը՝ վարձակալութ-յունում գուա ներդրումների նեծությանը հավասար գումարով: Այսինքն՝ վարձակալությունում գուա ներդրումների գծով վարձակալության ժամկետի մեկնարկին վարձատուն որպես դերիտորիական պարտը արտացոլում է ֆի-նանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն գումարները, միաժամանակ՝ չվաստակած ֆինանսական (տոկոսային) եկամուտները:

Վարձակալն իր ֆինանսական վիճակի նախն հաշվետվությունում ֆի-նանսական վարձակալությունը պետք է ճանաչի որպես ակտիվ (վարձա-կալությանը օգտագործվող իիմանական միջոցները) և պարտավորություն (կրե-դիտորական պարտը՝) վարձակալված գույքի իրական արժեքին հավասար գումարով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է, ընդ որում՝ դրանցից յուրաքանչյուրը որոշվում է վարձակա-լության սկզբի դրությանը: Այսինքն՝ վարձակալության ժամկետի մեկնարկին վարձակալը որպես կրեդիտորական պարտը է արտացոլում ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարները և միաժամա-նակ՝ չկրած ֆինանսական (տոկոսային) ծախսները:

Ֆինանսական եկամուտը՝ վարձատուի նուա, իսկ ֆինանսական ծախսը՝ վարձակալի նուա բաշխվում և ճանաչում են վարձակալության պայմանագրի գործողության ընթացքում:

Վարձատուն ֆինանսական եկամուտը պետք է ճանաչի ըստ այնպիսի գրաֆիկի, որը կապահովի հատուցման հաստատուն պարբերական դրույք ֆինանսական վարձակալության շրջանակներում վարձատուի գուա ներ-դրումների նկատմամբ:

Վարձակալը նվազագույն վարձավճարները պետք է բաշխի ֆինանսա-կան վճարի և չվճարված պարտավորության նվազեցման միջև: Ֆինանսա-կան վճարը վարձակալության ժամկետի ընթացքում, ըստ ժամանակա-շրջանների, պետք է բաշխի այնպես, որ ստացվի հաստատուն պարբերա-կան տոկոսադրույք յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ:

Նվազագույն են այն վարձավճարները, որոնք վարձակալության ժամ-կետի ընթացքում պահանջվուն կամ կարող են պահանջվել վարձակալից՝ հաշվի առնելով նաև ստանդարտի պահանջներն ու սահմանափակումները: Նվազագույն վարձավճարների ներկա արժեքի հաշվարկման ժամանակ գեղշման դրույք է համարվում վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե դա հնարավոր է որոշել:

Վարձակալությանը ենթադրվող տոկոսադրույքը գեղշման այն դրույքն է, որը վարձակալության սկզբի դրությամբ հանգեցնում է նվազագույն վարձա-

վճարների ու չերաշխավորված մնացորդային արժեքի հանրագումարի ներկա արժեքի և վարձակալված ակտիվի իրական արժեքի ու վարձատուի սկզբնավորման ուղղակի ժամանակակից հանրագումարի հավասարությանը: Համաձայն ՀՀՍՍ 17.«Վարձակալություն» ստանդարտի՝ սահմանումների՝ ֆինանսական վարձակալության սինթետիկ (համադրական) հաշվառումը կազմակերպվում է համապատասխան սխեմայով⁶:

Սինթետիկ հաշվառման սխեմաները անհրաժեշտ են դիտարկել «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի» շրջանակներում (ՀՀ ԿԲ խորհրդի 30.11.2011 թ. թիվ 322 Ն որոշում): Դրանում նաևնավորապես ֆինանսական վարձակալությունը գործառնությունների հաշվառման համար նախատեսված են հետևյալ խնդերի հաշիվները:

Վարձատուի հաշվառման համար

1820X	«Ֆինանսական կազմակերպություններից ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ»
1821X	«Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ»
1822X	«Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ ֆինանսական կազմակերպություններից»
1823X	«Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից»
6070X	«Տոկոսային եկամուտներ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ֆինանսական վարձակալությունից»
6071X	«Տոկոսային եկամուտներ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց տրամադրված ֆինանսական վարձակալությունից»

Վարձակայի հաշվառման համար

21006	«Ֆինանսական վարձակալությանը ստացված եիմնական միջոցներ»
21015	«Ֆինանսական վարձակալությանը ստացված եիմնական միջոցների կուտակված մաշվածություն»
3800X	«Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»
3810X	«Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր»
70701	«Տոկոսային ծախսեր՝ ստացված ֆինանսական վարձակալության դիմաց»
71135	«Ֆինանսական վարձակալությանը վարձակալված եիմնական միջոցների մաշվածության գծով ծախս»

⁶ Սինթետիկ հաշվառման սխեմաները և հաշվային թրանզակտությունները բերված են՝ օգաստունուով «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի» գործող հաշիվները (ՀՀ ԿԲ խորհրդի 30.11.2011 թ. թիվ 322 Ն որոշում):

Վարձատուն վարձակալության մեկնարկին վարձակալության համանվող ակտիվի (գույք, իիմնական միջոցներ) արժեքով դերետագրում է «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» հաշիվը՝ կրետետագրելով «Հիմնական միջոցներ» կամ «Այլ ակտիվներ» հաշիվը: Միաժամանակ, պայմանագրով և նարման ժամանակացույցով սահմանված վարձակալության ամբողջ ֆինանսական (տոկոսային) եկամուտների գումարով դերետագրվում է «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» հաշիվը՝ կրետետագրելով «Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտ» հաշիվը: Ֆինանսական եկամուտը ճանաչելիս հաստատուն պարբերական հատուցն արտացոլող գրաֆիկի հիման վրա որոշվող գումարով «Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտ» հաշիվը դերետով բորակցում է «Տոկոսային եկամուտ ֆինանսական վարձակալությունից» հաշիվը կրեդիտի հետ: Վարձավճարները ստանալիս դրամական փաստացի ներհոսքի գումարով դերետագրվում են դրամական միջոցներ հաշվառող հաշիվները և կրեդիտագրվում է «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» հաշիվը:

Հաշվառման նկարագրված մեխանիզմի գործնական կիրառման համար ներկայացված է պայմանական օրինակ: Ենթադրենք՝ իինչ տարի ժամկետով կմըկել է 12 650 հազար դրամ արժողությամբ սարքավորման ֆինանսական վարձակալության պայմանագիր հետևյալ պայմաններով.

<i>Գույքի արժեքը՝</i>	<i>12 650 000 դրամ</i>
<i>Կանխավճարի չափը՝</i>	<i>2 530 000 դրամ</i>
<i>Պայմանագրի գումարը՝</i>	<i>10 120 000 դրամ</i>
<i>Վճար ժամկետի վերջում սեփականության իրավունքի փոխանցման համար՝</i>	<i>126 500 դրամ</i>

Վարձավճարների մարման գրաֆիկը

Ամիսներ	Կապիտալի մնացորդ (դրամ)	Կապիտալ (դրամ)	Տոկոսագումար (դրամ)	Վճարման ներքալիքավճար (դրամ)
1	10 120 000	164 451	64 879	229 330
2	9 955 549	119 410	109 920	229 330
			...	
59	451 173	224 348	4 981	229 330
60	226 825	226 825	2 505	229 330
Ընդամենը		10 120 000	3 639 800	13 759 800

**Վարձատոմի՝ ֆինանսական վարձակալության գործառնությունների
սինքետիկ ձևակերպումները⁷**

Հ.	Գործառնության բովանդակությունը	Դերես	Կրեդիտ	Գումար (դրամ)
1.	Վարձակալության տրամադրման ենթակա գույքը նաև ակադեմիական համարի համարությանը համապատասխան առաջնային գումարը	25010	39210	10 541 667
2.	Զերո բերված գույքի գծով ԱԱՀ գումարը ձևակերպելիս	19112	39210	2 108 333
3.	Մասնակարարին գույքի դիմաց սպարտավորությունը վճարելիս	39210	10200	12 650 000
4.	Վարձակալության գույքի դիմաց սպայնանագրով սահմանված կանխավճարը վարձակալից սուսանալիս	10200	39220	2 530 000
5.	Ֆինանսական վարձակալության արանադրությունը գույքի արժեքի չափով ստացվելիք գումարները ձևակերպելիս	18211	25010	10 541 667
6.	Վարձակալության տրամադրման գծով ԱԱՀ սպարտավորությունը ձևակերպելիս	18211	39101	2 108 333
7.	Վարձակալության տրամադրման դեպքում անդրուջ ժամկետի համար ստացվելիք ֆինանսական (տոկոսային) շվաստակած եկամուտները ձևակերպելիս	18211	18231	3 639 782
8.	Վարձակալից ստացված կանխավճարի գումարը նարեկիս՝ վարձակալության արանադրության ժամանակը (տե՛ս գործ. 4)	39220	18211	2 530 000
9.	Ֆինանսական վարձակալության տրամադրման գծով ԱԱՀ սպարտավորության գումարից գույքի հեռըքերման գծով ԱԱՀ գումարը հաշվանցելիս՝ նաև ակադեմիական վճարելուց հետո (տե՛ս գործ. 2 և 6)	39101	19112	2 108 333
10.	Շվաստակած ֆինանսական եկամուտները վարձակալության ընթացքում ըստ հաշվետու ժամանակաշրջանների տոկոսային եկամուտ ճանաչելիս	18231	60711	64 879 ⁸
11.	Վարձակալից նարման գրաֆիկին համապատասխան վարձակալության իրավունքի վահասացի սուսանալիս	10200	18211	229 330
12.	Վարձակալության ժամկետափ վերջում գույքի սեփականության իրավունքի վոխանցման վճարը հաշվեգրելիս	19331	66304	105 417
13.	Սեփականության վոխանցման վճարի գծով ԱԱՀ գումարի սպարտավորությունը ձևակերպելիս	19331	39101	21 083
14.	Վարձակալից սեփականության վոխանցման վճարը վահասացի ստանալիս	10200	19331	126 500

⁷ Առևարային բանի վարձատոմի օրինակով:

⁸ Տոկոսային եկամուտների հաշվերումը կատարվում է բառ հաշվետու ամիսների, մարման գրաֆիկի «Տոկոսագումար» սյունակի գումարի չափով (1-ին ամսում՝ 64 879 դրամ, 2-րդում՝ 109 920 դրամ....., 60-րդում՝ 2 505 դրամ):

Վարձակալը վարձակալության մեկնարկին վարձակալական պարտավորությունների աճքող գումարով կրետիտագրում է «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ» հաշիվը՝ վարձակալված ակտիվի արժեքի չափով դերետագրելով «Ֆինանսական վարձակալության առաջված իիմնական միջոցներ» հաշիվը, միաժամանակ՝ պայմանագրով և մարման ժամանակացույցով սահմանված վարձակալության աճքող ֆինանսական (տոկոսային) ծախսերի գումարով դերետագրելով «Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր» հաշիվը: Ֆինանսական ծախսը ճանաչելիս, յորպահպես ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ հաստատուն պարբերական տոկոսադրույքը պահպանելով, «Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր» հաշիվը կրետիտով բրակցում է «Տոկոսային ծախսեր՝ ստացված ֆինանսական վարձակալության դիմաց» հաշվի դերետի հետ: Մարման ժամանակացույցով սահմանված վարձակալական պարտավորության բաժնեմասը վճարելիս դրամական փաստացի արտահոսքի գումարով դերետագրվում է «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ» հաշիվը՝ կրետիտագրելով դրամական միջոցներ հաշվառող հաշիվները: Վարձակալի՝ նույն պայմանագրի ձևակերպումներն են.

Վարձակալի՝ ֆինանսական վարձակալության գործառնությունների սինթետիկ ձևակերպումները⁹

ՀՀ	Գործառնության բովանդակությունը	Դերես	Կրեդիտ	Գումար (դրամ)
1.	Վարձակալվող գույքի դիմաց պայմանագրով սահմանված կանխավճարը վարձատուին փոխանցելիս	19102	10200	2 530 000
2.	Գույքը վարձակալության ընդունելիս դրա արժեքի չափով վճարվելիք գումարները ձևակերպելիս	21006	38001	10 541 667
3.	Վարձակալված գույքի գծով ԱԱՀ գումարը ձևակերպելիս	19112	38001	2 108 333
4.	Վարձակալության ամբողջ ժամկետի համար վճարվելիք ֆինանսական (տոկոսային) չկրած ծախսը ձևակերպելիս	38101	38001	3 639 782
5.	Վարձատուին պայմանագրով փոխանցված կանխավճարի գումարը մարելիս՝ գույքը վարձակալության ընդունելու ժամանակ (տե՛ս գործ. 1)	38001	19102	2 530 000
6.	Չկրած ֆինանսական ծախսը վարձակալության ընթացքուն ըստ հաշվետառ ժամանակաշրջանների տոկոսային ծախս ճանաչելիս	70701	38101	64 879 ¹⁰
7.	Մարման ժամանակացույցին համապատասխան վարձականագները վարձատուին փաստացի վճարելիս	38001	10200	229 330

⁹ Առևարսային բամեջ վարձակալի օրինակով:

¹⁰ Տոկոսային ծախսերի հաշվեգրումը կատարվում է ըստ հաշվետառ ամիսների՝ մարման գրաֆիկի «Տոկոսագումար» սյունակի գումարի չափով:

8.	Վարձակալի գործունեության ընթացքում ԱԱՀ գծով բյուջեին առաջացած պարտավորություններից վարձակալված գույքի գծով ԱԱՀ (դեբետային) գումարի հաշվանցում՝ յուրաքանչյուր ամիս վարձավորաբ վարձատուին փոխանցերոց հետո հաշվանցման իրավունքը ձեռք բերելին (սեն գործ. 3)	39101	19112	27 414 ¹¹
9.	Վարձակալվարժամբ օգտագործվող գույքի մաշվածության ծախսերը ձևակերպելին (տարեկան)	71135	21015	2 108 333 ¹²
10.	Վարձակալվարժան ժամկետի վերջում գույքի սեփականության իրավունքի վճարը վարձատուին փոխանցելին	19102	10200	126 500
11.	Վարձակալվարժամբ օգտագործվող գույքի սեփականության իրավունքը ստանալիս	21006	19102	105 417
12.	Գույքը սեփականության իրավունքը ձեռք բերելու գծով ԱԱՀ գումարը ձևակերպելին	19112	19102	21 083
13.	Վարձակալվարժամբ օգտագործվող իիմնական միջոցները որպես սեփական իիմնական միջոցներ վերադասակարգելին	21005	21006	10 647 084
14.	Վարձակալվարժամբ օգտագործվող իիմնական միջոցների գծով կուտակված մաշվածությունը որպես սեփական իիմնական միջոցների գծով մաշվածության գումար վերադասակարգելին	21015	21014	10 541 667

Լիզինգային գործառնությունների հաշվառումը որոշ առանձ նահատկություններ ունի նաև հարկային հաշվառման կազմակերպման տեսանկյունից¹³: Այդպես՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում նախատեսող պայմանագրի իիման վրա իրականացվող ֆինանսական վարձակալության գործարքները ԱԱՀ-ով հարկման առումով, ըստ Էության, դիտվում են որպես ապրանքի նատակարարման գործարքներ՝ վարձակալության տրվող ակտիվների արժեքի մասով, միաժամանակ՝ ծառայության մատուցում՝ վարձակալության տրամադրման համար գանձվող տոկոսագումարների մասով: Ընդ որում, ապրանքի նատակարարման գործարքների մասով վարձատուի նույն հարկային պարտավորության ծագման պահ է համարվում գույքը վարձակալին վարձակալության հանձնելու պահը: Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական վարձակալությունից (լիզինգից) ստացված տոկոսագումարները ազատված են ԱԱՀ-ից¹⁴: Քանի որ ֆինանսական վարձակալության գործարքները ենթակա

¹¹ Հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարը որոշվում է վճարման ենթակա վարձավճարը փոխանցելուց հետո՝ մարման գրաֆիկի «Կապիալ» այունակի գումարի 16.67%-ի չափով (1-

¹² Մաշվածության ծախսը հաշվարկված է գույքի արժեքի՝ 10 541 667 դրամի և ամորախացին ժամկետի (գույքի օգտակար ծառայության ժամկետի) իիման վրա, որը ավալ դեպքում համընկնում է վարձակալության ժամկետի և «Շահութակարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետի հետ՝ 5 տարվա հաշվարկով:

¹³ Տես Լукин Е., Лизинг: Бухгалтерский учет и налогообложение, М., „Система Гарант” 2005, 246 էջ:

¹⁴ Տես «ԱԱՀ մասին» ՀՀ օրենքը, հոդված 15:

Են ԱԱՀ-ով հարկման, այդ գործարքների պայմանագրային արժեքը որոշելիս հաշվի է առնվում ավելացված արժեքի հարկի գումարը: Վարձակալը պայմանագրային արժեքը վճարելիս հատուցում է նաև հարկի գումարը:

Ծահուրահարկի առումով, վարձատուն ֆինանսական վարձակալությունից ստացված տոկոսային եկամուտները ճանաչում է որպես համախառն եկամտի տարր, իսկ վարձակալը՝ համախառն եկամտից նվազեցում ինչպես ֆինանսական վարձակալության գծով տոկոսային ծախսերի, այնպես էլ վարձակալված հիմնական միջոցների անորոշիչացիոն նաև հանունների (նաշվածության ծախսեր) գումարով: Բնականաբար, թե՛ վարձակալի և թե՛ վարձատուի, հաճապատասխանաբար՝ ծախսերն ու եկամուտները բաշխվում են վարձակալության պայմանագրի գործողության հաշվետու տարիների միջև:

Լիզինգի հաշվառման համակարգում ընդգրկվում են նաև հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ, որոնք ծագում են հաշվապահական հաշվառման ստանդարտներով և հարկային օրենսդրությամբ նախատեսվող եկամուտների կամ ծախսերի ճանաչման պահի անհամապատասխանությունից, եթե ժամանակավոր տարրերություններ են առաջանում ակտիվի կամ պարտավորության ֆինանսական վիճակի նախն հաշվետվությունում ճանաչված հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բառայի միջև¹⁵:

Ֆինանսական վարձակալության համակարգում հետաձգված հարկային ակտիվներ հիմնականում առաջանում են վարձակալի մոտ, եթե կիրառվում է վարձակալած ակտիվի արագացված անորոշիչացիա: Հաշվապահական շահույթը որոշելիս վարձակալ կազմակերպությունում լիզինգի օրենսդրությունը կարող է անորոշիչացվել արագացված նաշվածության մերորդ¹⁶: Սակայն հարկային շահույթը որոշելիս հիմնական միջոցները, ըստ խնդերի, անորոշիչացվում և ընդգրկվում են ծախսերի կազմում՝ օրենքով սահմանված նվազագույն ժամկետներում, հավասարաշափ կարգով՝¹⁷ առաջացնելով հարկի ժամանակավոր տարրերություն:

АРМЕН АКОПЯН

Доктор экономических наук,
доцент кафедры финансового учета,
главный бухгалтер ЗАО КО „АГБА
Лизинг”

Учет лизинга в банка и кредитныи организаций - Финансовая аренда или лизинг в Армении осуществляется в качестве финансовых операций коммерческих банков и кредитных организаций. Учетная политика и требования к финансовой отчетности по лизингу определяются международным стандартом финансовой отчетности 17 „Аренда”. ЦБ РА в свою очередь для финансовых организаций утверждает план счетов

¹⁵ Տես ՀՀՍՍ 12.«Ծահուրահարկեր», հոդված 5:

¹⁶ Տես ՀՀՍՍ 16.«Հիմնական միջոցներ», հոդված 60:

¹⁷ Տես «Ծահուրահարկի մասին» ՀՀ օրենքը, հոդված 12:

бухгалтерского учета и инструкцию к его применению. Анализ этих нормативных актов очень важен в деле обеспечения правдивой финансовой информации о бизнесе. В статье проанализированы основные аспекты стандарта, и на их основе рассмотрены операции бухгалтерского учета у лизингодателя и лизингополучателя. Так же представлены некоторые особенности налогообложения лизинговых сделок.

ARMEN HAKOBYAN

a

*,,ACBA Lea
SC*

d

d

A

e

d

IAS 17 e